



# ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ  
ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի պրոֆեսոր,  
տնտեսագիտության դոկտոր

ՀՈՎԿԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ  
ՀՊՏՀ ՄՏՀ «Միջազգային արժուային հարաբերություններ»  
մասնագիտացման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

## ԵԱՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՆԵՐԴԱՇԱԿԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵԱՏՄ անդամ Երկրների հարկային օրենսդրություններին հատուկ են մի շարք ընդհանուր հիմնախնդիրներ, որոնցից են տնտեսավարող սուբյեկտների միջև հարկային բերի անհամաչափ բաշխումը և հարկային օրենսդրությունների որոշ տարրերությունները: Ժամանակակից փոլում հիմնական խնդիրներից մեկը ԱՄՀ դրույքաչափերի ներդաշնակեցումն է, քանի որ ներկայունս ԵԱՏՄ անդամ Երկրներում կիրառվող դրույքաչափերը հիմնականում չեն համընկնում: Երկարաժամկետ հեռանկարում անուղղակի հարկման միասնականացումը կնպաստի աշխատանքի և կապիտալի առավել արդյունավետ վերաբաշխմանը, բնակչության և ընկերությունների եկամուտների ավելացմանը, ԵԱՏՄ անդամ Երկրներում գործարար միջավայրի և բիզնեսի արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

**Հիմնաբառեր.** ավելացված արժեքի հարկ, հարկային համակարգերի ներդաշնակեցում, հարկային բերի անհամաչափ բաշխում

JEL: F69, H71

Ընդունված է համարել, որ տարածաշրջանային միասնացման ԵՄ փորձում առավել արժեքավոր է որոշումների ընդունման մեխանիզմը, որով վերջինս էականորեն տարբերվում է ԵԱՏՄ մեխանիզմից: Ընդ որում, հենց որոշումների ընդունման մեխանիզմն է եղել ԵՄ հաջող զարգացման գլխավոր գործոնը: Այդ մեխանիզմի օգնությամբ ԵՄ-ին հաջողվում է ընդունել որոշում-

ներ, որոնք համապատասխանում են ինչպես մեծ, այնպես էլ փոքր երկրների տնտեսական շահերին, իսկ ԵՄ համատեղ քաղաքականությունից դժգոհող քաղաքացիների թիվը զգալիորեն զիջում է ԵՄ նկատմամբ դրական տրամադրված քաղաքացիների թվին:

Սակայն 2014 թվականից սկսել են ի հայտ գալ կասկածներ ԵՄ շրջանակներում ընդունվող որոշումների արդյունավետության վերաբերյալ: Սասանավորապես՝

- կասկածներ, ըստ որի՝ վերազգային ինտեգրացիոն մեխանիզմի օրգացումն արդյոք կիամապատասխանի<sup>1</sup> առանձին երկրների ազգային շահերին՝ այդ մեխանիզմի ժողովրդավար լինելու և առանձին երկրների հարկային համակարգերի վրա ազդեցության տեսակետից,
- մտահոգություններ, կապված այն հանգամանքի հետ, որ միջազգային կարգավորումներում վերազգային տարրերի ամրապնդման միտումների արդյունքում պետությունը կորցնում է ազգային տնտեսության նկատմամբ վերահսկողությունը:

Սակայն այդ կասկածները չեն կարող չեղարկել ԵՄ միասնացման անվիճելի հաջողությունները, այդ թվում՝ հարկային ինտեգրման ոլորտում:

Անուղղակի հարկման ոլորտում իրականացվում է ԵՄ անդամ երկրների հարկային համակարգերի ներդաշնակեցում, իսկ եկամտագույքային ուղղակի հարկման ոլորտում՝ կարգավորում: Հարկային համակարգերի կարգավորման հիմնական նպատակներն են ԵՄ մակարդակում կրկնակի հարկման բացառումը, ֆիսկալ խոշընդուների վերացումը, խտրականության բացառումը<sup>2</sup>:

ԵՄ երկրների հարկային մարմինների կողմից աշխատանքներ են տարվում նաև հարկային վարչադրության բարեկավման ուղղությամբ՝ անուղղակի հարկերի գումարների վերաբերյալ տեղեկատվության փոխանակության միջոցով<sup>3</sup>:

Անդրադարձալով ԵԱՏՄ անդամ երկրների հարկային օրենսդրություններին՝ արձանագրենք, որ վերջիններիս հատուկ են մի շարք ընդհանուր հիմնախնդիրներ, որոնք բացասաբար են ազդում փոխշահավետ առևտրային հարաբերությունների ակտիվության վրա: Այդ հիմնախնդիրներից են տնտեսավարող սուբյեկտների միջև հարկային բեռն անհամաշափ բաշխումը և հարկային օրենսդրությունների որոշ տարրերությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդում են միասնացման գործընթացի վրա: Մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամ երկրներում հիմնական հարկատեսավմերի որույքաչափերի անբողջական միասնականացում առաջմ չի դիտարկվում, քանի որ հարկերի դրույքաչափերը կախված են այդ երկրների տնտեսական զարգացման մակարդակից, ինչպես նաև յուրաքանչյուր երկրում իրականացվող հարկային քաղաքականությունից<sup>3</sup>:

<sup>1</sup> Տես **Алисенов А.С.**, Перспективы налоговой интеграции государств - членов Евразийского экономического союза, Финансовый журнал / Financial Journal, №5, 2017, էջ 113:

<sup>2</sup> Տես **Алисенов А.С.**, Налоговые аспекты интеграции Евразийского экономического союза // Всероссийский экономический журнал (ЭКО), № 2, 2017, էջ 90:

<sup>3</sup> Տես **Ратушняк Е.С.**, Об унификации внешнеэкономической политики в сфере налогообложения в странах ЕЭП: проблемы и перспективы; Журнал "Вестник МГИМО-Университета", №1 (34), 2014, էջ 76. <https://cyberleninka.ru/article/n/ob-unifikatsii-vneshneekonomiceskoy-politiki-v-sfere-nalogooblozheniya-v-stranah-eep-problemy-i-perspektivy>

Ներկայում ԵԱՏՄ շրջանակներում ձևավորվել է երկմակարդակ հարկային համակարգ (բացառությամբ ՈԴ-ի, որտեղ հարկային համակարգը եռամակարդակ է): Այսպես՝ Հայաստանում առկա են 8 համապետական և 2 տեղական հարկեր, Բելառուսում, համապատասխանաբար՝ 12 և 4, Ղազախստանում՝ 5 և 12, Ղրղզստանում՝ 6 և 16, ՈԴ-ում՝ 16 համապետական, 7 տարածաշրջանային և 5 տեղական<sup>4</sup>:

Ժամանակակից փուլում հիմնական խնդիրներից մեկը տարբեր հարկացների դրույքաչափերի, առաջին հերթին՝ ԱԱՀ դրույքաչափերի նույնականացումն է, քանի որ ներկայում ԵԱՏՄ անդամ երկրներում կիրառվող դրույքաչափերը չեն համընկնում, ընդ որում, առանձին հարկատեսակների գանձումը կատարվում է նշանակման երկիր սկզբունքին համապատասխան: Այսպես օրինակ՝ արտադրանքի ներմուծման ժամանակ կիրառվում է ԱԵՐ-մուծող երկրում գործող դրույքաչափը, այսինքն՝ ՈԴ ԱԵՐ-մուծման դեպքում ԵԱՏՄ երկրների համար գործում են համապատասխանաբար՝ 10% և 18% դրույքաչափերը, Ղազախստանի դեպքում՝ 12%, Բելառուսի, Ղրղզստանի և Հայաստանի դեպքում՝ 20%<sup>5</sup>:

Մասնագետների կարծիքով՝ ազգային հարկային համակարգերում առկա տարբերությունները չեն նպաստում միասնական ներդրումային տարածքի՝ որպես ինտեգրող երկրների ներդրումային գրավչության բարձրացման հիմնական գործոնի ծևավորմանը: Վերոնշյալ խնդիրի լուծման առավել նախընտրելի տարբերակ է դիտարկվում ԵԱՏՄ երկրներում կիրառվող անուղղակի հարկերի դրույքաչափերի նույնականացումը՝ անդամ երկրների միջև վճարած հարկերի գումարների հետագա բաշխման մեխանիզմի կիրառմանը<sup>6</sup>:

#### Այլուսակ 1

#### ԵԱՏՄ անդամ երկրների բյուջեների եկամուտների կառուցվածքը 2017 թ.\*

Ցուցանիշներ	Ուսաստան	Բելառուս	Ղազախստան	Հայաստան	Դրաստան
Ընդամենը Եկամուտներ, այդ թվում՝	100	100	100	100	100
Հանուրահարկ	5.1	5.2	15.9	8.9	3.2
ԱԱՀ	34.0	32.3	17.2	33.0	33.5
Ակղղային հարկ	6.5	11.8	0.8	6.7	7.1
Եկամուտներ արտաքին տնտեսական գործունեությունից	17.2	17.9	12.3	5.9	12.3
Այլ	37.1	32.8	53.8	45.5	44.0

\*Հաշվարկվել է ըստ՝ Финансовая статистика Евразийского экономического союза. Оперативные данные за 2017 год. Статистический сборник; Евразийская экономическая комиссия. М., 2018, էջ 17–18 (124).

[http://www.eurasiancommission.org/ru/act/integr\\_i\\_makroec/dep\\_stat/fin\\_stat/statistical\\_publications/Pages/default.aspx](http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/statistical_publications/Pages/default.aspx)

<sup>4</sup>Տե՛ս Մամբետաև Հ.Տ., Լեբեծե Տ.Վ., Становление налоговых систем в государствах Евразийского экономического сообщества, Журнал "Налоговый вестник", № 5, 2011. <http://www.nalvest.com/nv-articles/detail.php?ID=24973>

<sup>5</sup>Տե՛ս Մալիս Հ., Գրունդել Լ., Ղործունական գործունեությունը ներկայացնելու հարցերը, Հայաստան, 2015, էջ 64:

<sup>6</sup>Տե՛ս Տրունինա Ե.Վ., Правовое регулирование таможенных отношений в Евразийском экономическом союзе // Евразийство: на пути к "Большой Европе": учебное пособие / кол. авт., науч. ред. Ю.Н. Сушкова. Саранск: Изд-во Мордов. ун-та, 2015, էջ 188:

ԵԱՏՄ անդամ երկրների հարկային համակարգերի ինտեգրման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ հարկային համակարգի միջոցով վերաբաշխվում է այդ երկրներում ստեղծված ՀՆԱ մեծ մասը, իսկ ԵԱՏՄ անդամ երկրների պետական եկամուտների կառուցվածքում հարկային եկամուտները շոշափելի տեսակարար կշիռ ունեն (այսուսակ 1):

Հարկ է նշել, որ ԵԱՏՄ անդամ երկրների հարկային համակարգերն, ընդհանուր առնամբ, նման են, դրանց գործունեությունն ուղղված է ներդրումների ներգրավմանը, ինչի մասին վկայում են ցածր դրույքաչափերը, սակայն մակրոտնտեսական ցուցանիշները կտրուկ տարբերվում են (այսուսակ 2):

## Այսուսակ 2

### ԵԱՏՄ անդամ երկրների հիմնական հարկերի դրույքաչափերը և ՀՆԱ ցուցանիշները 2017 թ.\*

Պետություն	Հիմնական հարկերի դրույքաչափեր			Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դրամ)	ՀՆԱ (մյու ԱՄՆ դրամ)
	Ծահութա- հարկ	ԱՄԿ	Եկամուտային հարկ		
Ռուսաստան	20	0; 10; 18	13; 15; 30; 35	8769	1286.2
Բելառուս	18	0, 10; 20	9; 13; 16	4964	47.2
Ղազախստան	15	0; 12	5; 10	7509	135.0
Հայաստան	20	20	10; 23; 28; 36 (ալրդեսիվ)	3525	10.5
Ղրղզստան	10	0; 12	10	1078	6.5

\*Հաշվարկվել է ըստ՝ Եվразийский экономический союз в цифрах: краткий статистический сборник. Евразийская экономическая комиссия. М., 2018, 206 էջ.

[http://www.eurasiancommission.org/ru/act/integr\\_i\\_makroec/dep\\_stat/econstat/Pages/statpub.aspx](http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Pages/statpub.aspx)

ԵԱՏՄ երկրների տնտեսությունների ներդրումային գրավչության մասին են վկայում հարկային բերի վերաբերյալ տվյալները, որոնք, ընդհանուր առմամբ, համադրելի են ԲՀՇՀԱ և ՏՀՁԿ երկրների տվյալների հետ (այսուսակ 3):

## Այսուսակ 3

### Հարկային բերոք ԵԱՏՄ, ԲՀՇՀԱ և ՏՀՁԿ անդամ երկրներում (հարկեր/ՀՆԱ)\*

Ծրկիր	Ժամանակաշրջան					
	2011	2012	2013	2014	2015	2017
<b>ԵԱՏՄ</b>						
Ռուսաստան	37.26	37.67	36.62	36.64	36.61	33,7
Բելառուս	38.76	40.53	41.95	41.84	42.33	30,1
Ղազախստան	27.70	26.92	25.26	25.63	23.52	21,2
Հայաստան	22.09	22.31	23.67	23.55	23.71	22,9
Ղրղզստան	31.84	33. 82	33. 94	30. 51	30.18	28,7
ԵԱՏՄ (միջին)	30. 10	30. 90	31. 21	30. 39	29.93	27.3
<b>ԲՀՇՀԱ (առանց Ռուսաստանի)</b>						
Բրազիլիա	36.95	38. 12	37. 87	38. 19	37.86	35,9
Հնդկաստան	18. 71	19. 48	19. 76	19. 47	19.54	19.45
Չինաստան	27. 68	28. 36	28. 18	27. 36	27.40	27.47
Հարավային Աֆրիկա	27. 87	28. 30	28. 77	28. 80	28.77	28.71
ԲՀՇՀԱ (միջին)	27. 80	28. 56	28. 65	28. 45	28.40	27.88
ՏՀՁԿ (միջին)	33. 27	33. 73	34. 46	34. 64	34.71	35.9

\*Հաշվարկվել է ըստ՝ Основные направления налоговой политики на 2016 год и на плановый период 2017 и 2018 годов, [http://minfin.ru/common/upload/library/2015/07/main/ONNP\\_2016-2018.pdf](http://minfin.ru/common/upload/library/2015/07/main/ONNP_2016-2018.pdf), Евразийский экономический союз в цифрах: краткий статистический сборник, Евразийская экономическая комиссия. М., 2018, էջ 20 (206), OECD (2018), Taxing Wages 2018, OECD Publishing, Paris. <http://www.oecd.org/ctp/tax-policy/taxing-wages-20725124.htm>; <https://countryeconomy.com/countries/groups/brics>.

Այսպիսով՝ այդուսակ 3-ի տվյալները ցույց են տալիս, որ առավել ցածր միջին հարկային բեռք բաժին է ընկնում ԵԱՏՄ երկրներին, մի փոքր ավելի է ԲՀՌՀԱ երկրներում: Առավել մեծ հարկային բեռք բաժին է ընկնում ՏՀՀԿ երկրներին, որը հասկանալի է և համապատասխանում է զարգացած երկրների հարկնան մակարդակին: Հաճարվում է, որ զարգացող երկրներում հարկային ցածր դրույքաչափերը և հարկային արտոնություններն այդ երկրների ներդումային գրավչության բարձրացման միջոց են<sup>7</sup>:

ԵԱՏՄ երկրների հարկերի դրույքաչափերի միասնականացման համար որպես օրինակ կարող է ծառայել ԵՄ փորձը, ըստ որի, ԱԱՀ համաեվրոպական համակարգի հրահանգին համապատասխան, առաջարկվում է սահմանել ԱԱՀ նվազագույն բոլոյատրելի շեմ առաջիկա 5 տարիների համար:

Եվրոպական միասնացման փորձը ցույց է տալիս, որ ի սկզբանե ներդաշնակեցվում է անուղղակի հարկման օրենտությունը, առանց որի անհնար է ազատ առևտորի պայմաններ ստեղծել<sup>8</sup>: Ընդունելով անուղղակի հարկման համակարգի ամբողջական ներդաշնակեցման անհրաժեշտությունը՝ հարկ է նշել, որ առավել նպատակահարմար է ընդունել միասնական համախմբող իրավական ակտ՝ միջազգային համաձայնագրի տեսքով<sup>9</sup>:

Միասնական մաքսահարկային քաղաքականության իրականացումը պահանջում է ԵԱՏՄ անդամ երկրների հարկային համակարգերի միասնականացման և ներդաշնակեցման որոշակի դրույթների մշակում, որոնցից առավել հիմնարար են միաձայնության, համանասնականության և համապարտության, ոչ խտրականության սկզբունքները:

Հարկային ինտեգրման համար ոչ պակաս կարևոր է ԵԱՏՄ անդամ երկրների տեղեկատվական համակարգերի միասնացումը՝ հիմնված հարկային տեղեկատվության փոխանակության վրա<sup>10</sup>:

Հարկային միասնացումը համարվում է ԵԱՏՄ-ին նոր երկրների ինտեգրման հիմնական պայմաններից մեկը, հետևաբար՝ դա նպաստում է անդամ երկրների ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական համակարգերի մերձեցմանը<sup>11</sup>: Հաշվի առնելով ԵՄ երկրների փորձը՝ հարկավոր է արդյունավետ դարձնել մաքսասակագույնին և հարկային կարգավորմանն ուղղված կարևորագույն հարցերի շուրջ որոշումների ընդունման ընթացակարգը: Մասնավորապես՝ անհրաժեշտ է զարգացնել ԵԱՏՄ անդամ երկրների հարկային մարմինների միջև համագործակցությունը՝ հարկային վճարումների օպտիմացման, կրնակի հարկման և խտրականության բացառման նպատակներով<sup>12</sup>:

Անուղղակի հարկերի հարկման համակարգերը ենթակա են ներդաշնակեցման առավել մեծ չափով, քանի որ զգալի ազդեցություն են բռնուում գնագոյացման վրա և ԵԱՏՄ բոլոր երկրների հարկային եկամուտներում ամենամեծ բաժինն ունեն<sup>13</sup>: Բացի դրանից, անդամ երկրների անուղղակի

<sup>7</sup> Տե՛ս **Алисенов А.С.**, Перспективы налоговой интеграции государств - членов Евразийского экономического союза, նշվ. իրատ., էջ 115:

<sup>8</sup> Տե՛ս **Terra B.**, European Tax Law / B. Terra, P. Wattel. Fifth edition. Netherlands: Kluwer Law International, 2008:

<sup>9</sup> Տե՛ս Налоговое право Евразийского экономического сообщества: правовой режим налога на добавленную стоимость / под ред. Д. В. Винницикого. М., “Волтерс Клювер”, 2010:

<sup>10</sup> Տե՛ս **Алисенов А.С.**, նշվ. աշխ., էջ 117–118:

<sup>11</sup> Տե՛ս **Зиядуллаев Н.**, ЕАЭС: между политикой и экономикой // Проблемы теории и практики управления, № 9, 2015.

<sup>12</sup> Տե՛ս **Алисенов А.С.**, Перспективы налоговой интеграции государств - членов Евразийского экономического союза, նշվ. իրատ., էջ 119:

<sup>13</sup> Տե՛ս **Ермекбаева Б.Ж.**, Проблемы гармонизации налоговых систем в рамках ЕврАзЭС // Publishing house Education and science s.r.o. URL: [http://www.rusnauka.com/10\\_ENXXIV\\_2007/Economics/21744.doc.htm](http://www.rusnauka.com/10_ENXXIV_2007/Economics/21744.doc.htm)

հարկման տարբերությունները հանգեցնում են նրան, որ այդ երկրների ապրանքների գներն արտացոլում են ոչ միայն արտադրության գործոնների օգտագործման արդյունավետությունը, այլև տվյալ երկրին հատուկ հարկման համակարգերի պարամետրերը: Միևնույն ժամանակ, ինտեգրման խորացմանը զուգահեռ, արտադրողներն ինտեգրացիոն խնճավորման միասնական շուկայում մտնում են մրցակցության մեջ: Դրանով իսկ տեղի է ունենում մրցակցության խեղաթյուրում՝ կապված հարկային համակարգերի ազգային տարբերությունների հետ: Տեղի է ունենում մրցակցության խեղաթյուրում նաև միավորվող ֆինանսական շուկաներում, եթե հաշվի առնենք ֆինանսական գործիքների և ակտիվների հարկման տարբեր համակարգերի առկայությունը:

Ընդհանուր առմանք, ԵԱՏՄ երկրների անուղղակի հարկման ներդաշնակեցումը ենթադրում է անցում անուղղակի հարկերի գանձման միասնական կանոնների՝ ներառյալ ԱԱՀ Վերադարձի կանոնակարգի և ժամկետների, դրույքաչափերի մերձեցման խնդիրները: Բացի դրանից, անհրաժեշտ է ընդունել անուղղակի հարկերի գանձման վարչարարության միասնական կարգ ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ առևտորի ժամանակ մաքսային ծևակերպումների չեղարկման դեպքում՝ հաշվի առնելով ԱԱՀ գանձման սկզբունքների նույնականացումը և ԱԱՀ վճարողների միասնական ռեեստրի ստեղծման հարցերը: ԵԱՏՄ անուղղակի հարկման ասպարեզում քաղաքականությունը պետք է հիմնվի հարկային դրույքաչափերի վերանայման սկզբունքների վրա՝ ներմուծվող և արտահանվող ապրանքների դրույքաչափերի նույնականացման նպատակով<sup>14</sup>:

Այսպես՝ Բելառուսում ԱԱՀ դրույքաչափերը սահմանված են համապատասխանաբար՝ 20%, 0,5% և 0%, Ղազախստանում՝ 12% և 0%, Ղրղզստանում՝ 12% և 0%, Ռուսաստանում՝ 18%, 10% և 0%, Հայաստանում՝ 20% և 0%: ԵԱՏՄ շրջանակներում հարկային դրույքաչափերի տարբերությունը նպաստում է ապրանքների և ծառայությունների մատակարարման ուղիների խաթարմանը և խթանում է, այսպես կոչված, հարկային մրցակցությունը: Այդ պատճառով հարկման ներդաշնակեցումը ենթադրում է ԵԱՏՄ երկրների համար ԱԱՀ միասնական դրույքաչափի սահմանում 15%-ից ոչ ցածր մակարդակում և արտահանման դեպքում «զրոյական» դրույքաչափի համար անհրաժեշտ փաստաթղթերի նույնականացում<sup>15</sup>:

Հաշվի առնելով Վերոնշյալը, ինչպես նաև ԱԱՀ նշանակությունը ԵԱՏՄ երկրների արտաքին առևտորի զարգացման համար՝ անհրաժեշտ է նշել հետևյալ առաջնահերթ ուղղությունները:

- միասնական տերմինաբանության օգտագործում ԱԱՀ-ով հարկման օբյեկտների որոշման համար,
- ԱԱՀ-ով հարկման օբյեկտների նույնական ցանկի ամրագրում, ինչպես նաև ԱԱՀ հարկման օբյեկտ չհամարվող գործառնությունների ցանկի հաստատում,
- «ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացում (մատակարարում)» միասնական հասկացության սահմանում, որը տվյալ

<sup>14</sup>Տես Կորотինա Վ.Լ., Ժվերանցեա Մ.С., Կարիմօվա Է.Պ., Հայութ պարագաների առաջնահերթ օպտագործումը ԵԱՏՄ երկրների առևտորի զարգացման համար՝ անհրաժեշտ է նշել հետևյալ առաջնահերթ ուղղությունները.

<sup>15</sup>Տես Կարիմօվա Է.Պ., Ժվերանցեա Մ.С., Գոլուբնիչենկո Մ.Վ., Կ վարությունը օպտագործում ԵԱՏՄ երկրների առևտորի զարգացման համար՝ անհրաժեշտ է նշել հետևյալ առաջնահերթ ուղղությունները.

- հարկի հարկման օբյեկտի հիմքն է կազմում,
- ԱԱՀ-ով հարկման օբյեկտների թվարկման ընդհանուր մոտեցումների սահմանում և ԵԱՏՄ անդամ երկրների օրենսդրական ակտերից այնպիսի հասկացությունների դուրսբերում, որոնք տարբեր կերպ են մեկնաբանվում ազգային մակարդակում,
  - ապրանքների (ծառայությունների) իրացման դեպքում հարկային օրենսդրությամբ հարկման բազայի առանձնահատկությունների ամրագրման հնարավորություն,
  - մաքսային տարածք ապրանքների (ծառայությունների) ներմուծման դեպքում հարկման բազայի որոշման նույնական եղանակի սահմանում,
  - մասհանճան ենթակա ԱԱՀ գումարների հաշվարկման միասնական մեթոդների կիրառում,
  - ԵԱՏՄ տնտեսական տարածքում ԱԱՀ դրույքաչափերի աստիճանական մերձեցում,
  - ԵԱՏՄ անդամ երկրների հարկային օրենսդրություններով ապրանքների (ծառայությունների) արտահանման անհրաժեշտ փաստաթղթերի նիշանական ցանկի հաստատում,
  - հաշվապահական հաշվառման և մաքսային օրենսդրության միասնականացում:

Հարկ է նաև նկատել, որ ԵԱՏՄ երկրներում հարկային կարգավորման հիմնական խնդիրը կանոնակարգման ենթակա հիմնական սկզբունքները ներառու համընդհանուր փաստաթղթերի բացակայությունն է<sup>16</sup>:

ԵԱՏՄ անդամ երկրների հարկային օրենսդրությունների վերլուծությունը թույլ է տալիս կատարել որոշակի եզրահանգումներ.

1. Անուղղակի հարկերի հետագա ներդաշնակեցումն ու միասնականացումը նպատակահարմար է իրականացնել հարկման բազայի ծևավորման կարգի և վճարման ենթակա հարկի փաստաթղթային հաստատման մերձեցման ուղղությամբ:

2. ԵԱՏՄ անդամ երկրների հարկային օրենսդրությունների մերձեցման հիմքը ԵԱՏՄ-ի մասին համաձայնագիրն է, որտեղ կողավորվում են նախկինում կնքված համաձայնագրերը, ինչպես նաև ներմուծված են նոր, սկզբունքորեն կարևոր նորմեր (խորականության բացառման, ֆիզիկական անձանց եկամուտների հարկման մասին և այլն):

3. ԵԱՏՄ անդամ երկրների հարկային օրենսդրությունների ներդաշնակեցման և միասնականացման ընթացքում նպատակահարմար է մշակել ԵԱՏՄ օրենսդրության հիմունքները՝ հաշվի առնելով արոեն իսկ մշակված հարկային օրենսդրության հիմունքների հայեցակարգի դրույթները<sup>17</sup>:

Այսպիսով՝ երկարաժամկետ հեռանկարում անուղղակի հարկման միասնականացումը և ուղղակի հարկման կարգավորման արդյունավետության մակարդակի բարձրացումը կնպաստի.

- աշխատանքի և կապիտալի առավել արդյունավետ վերաբաշխմանը,
- խոշընդուների նվազեցմանը, որը կավելացնի բնակչության և ընկերությունների եկամուտները, որոնք կապահովեն խնայողությունների և ներդրումների աճը,

<sup>16</sup> Տես Բարուխ Ե.Ը., Об унификации внешнеэкономической политики в сфере налогообложения в странах ЕЭП: проблемы и перспективы. Журнал "Вестник МГИМО-Университета", №1 (34), էջ 76. <https://cyberleninka.ru/article/n/ob-unifikatsii-vneshneekonomiceskoy-politiki-v-sfere-nalogooblozheniya-v-stranah-eep-problemy-i-perspektivy>

<sup>17</sup> Տես Զօրինա Ռ.Ը., Перспективы гармонизации налогового законодательства стран – участниц ЕАЭС, журнал "Законодательство", июль, 2015, էջ 76–77:

- ԵԱՏՄ անդամ երկրներում գործարարության միջավայրի և բիզնեսի արդյունավետության ապահովմանը մրցակցության ակտիվացման և հարկային վարչարարության որակի բարձրացման հաշվին:

### Օգլոագործված գրականություն

1. Алисенов А.С., Перспективы налоговой интеграции государств - членов Евразийского экономического союза, Финансовый журнал / Financial Journal , №5, 2017.
2. Алисенов А.С., Налоговые аспекты интеграции Евразийского экономического союза // Всероссийский экономический журнал (ЭКО), № 2, 2017.
3. Ратушняк Е.С., Об унификации внешнеэкономической политики в сфере налогообложения в странах ЕЭП: проблемы и перспективы; Журнал "Вестник МГИМО-Университета", №1 (34), 2014.  
<https://cyberleninka.ru/article/n/ob-unifikatsii-vneshneekonomiceskoy-politiki-v-sfere-nalogooblozheniya-v-stranah-eep-problemy-i-perspektivy>
4. Мамбеталиев Н.Т., Лебедева Т.В., Становление налоговых систем в государствах Евразийского экономического сообщества, Журнал "Налоговый вестник", № 5, 2011. <http://www.nalvest.com/nv-articles/detail.php?ID=24973>
5. Малис Н., Грундел Л., Горохова Н., Актуальные проблемы налогового администрирования НДС // "Налоговый вестник", № 12, 2015.
6. Трунина Е.В., Правовое регулирование таможенных отношений в Евразийском экономическом союзе // Евразийство: на пути к "Большой Европе": учеб пособие / кол. авт., науч. ред. Ю.Н. Сушкина. Саранск: Изд-во Мордов. ун-та, 2015.
7. Terra B. European Tax Law / B. Terra, P. Wattel. Fifth edition. Netherlands: Kluwer Law International, 2008.
8. Налоговое право Евразийского экономического сообщества: правовой режим налога на добавленную стоимость / под ред. Д. В. Винницкого. М., "Волтерс Клувер", 2010.
9. Зиядуллаев Н., ЕАЭС: между политикой и экономикой // Проблемы теории и практики управления, № 9, 2015.
10. Ермекбаева Б.Ж., Проблемы гармонизации налоговых систем в рамках ЕврАзЭС // Publishing house Education and science s.r.o. URL: [http://www.rusnauka.com/10.\\_ENXXIV\\_2007/Economics/21744.doc.htm](http://www.rusnauka.com/10._ENXXIV_2007/Economics/21744.doc.htm)
11. Коротина В.Л., Жверанцева М.С., Каримова Э.Р., Развитие процессов евразийской интеграции под воздействием налоговых механизмов; Известия Саратовского ун-та. Сер. Экономика. Управление. Право. Т. 13, вып. 3(1), 2013.
12. Каримова Э.Р., Жверанцева М.С., Голубченко М.В., К вопросу о гармонизации систем косвенного налогообложения в Евразийском экономическом сообществе, Известия Саратовского ун-та. Сер. Экономика. Управление. Право. Т. 13, вып. 4(1), 2013.
13. Зорина Р.С., Перспективы гармонизации налогового законодательства стран - участниц ЕАЭС, журнал "Законодательство", июль, № 7, 2015.

**ДАВИД АХВЕРДЯН**

Профессор кафедры МЭО АГЭУ, доктор экономических наук

**ОГАННЕС МЕЛКУМЯН**

Студент 2-ого курса магистратуры кафедры международных экономических отношений по специализации "Международные валютные отношения" АГЭУ

**Основные задачи гармонизации налога на добавленную стоимость в пределах ЕАЭС.**— Налоговым законодательством стран-участниц ЕАЭС характерны ряд общих проблем, одной из которых является неравномерное распределение налогового бремени и некоторые различия в налоговых законодательствах. На современном этапе одной из основных задач является гармонизация ставок НДС, поскольку применяемые в странах-участницах ЕАЭС ставки в основном не идентичны. В долгосрочной перспективе гармонизация косвенного налогообложения способствует более эффективному распределению труда и капитала, увеличению доходов населения и фирм, улучшению деловой среды и эффективности бизнеса в странах ЕАЭС.

**Ключевые слова:** налог на добавленную стоимость, гармонизация налоговых систем, неравномерное распределение налогового бремени.

JEL: F69, H71

**DAVIT HAKHVERDYAN**

*Professor at the Chair of  
IER at ASUE, Doctor of Economics*

**HOVHANNES MELKUMYAN**

*Graduate student in IER Master's Degree at ASUE,  
majoring in International Currency Relations*

**The Main Objectives of the Harmonization of Value-added Tax within the EAEU.**— The tax legislations of the EAEU member countries are characterized by a number of common problems, one of which is the uneven distribution of the tax burden and some differences in tax legislation. At the present stage, one of the main issues is the harmonization of VAT rates, since the rates used in the EAEU member-countries are mostly not identical. In the long run, the harmonization of indirect taxation will contribute to the more efficient distribution of labor and capital, the increase in incomes of the population and firms, the improvement of the business environment and business efficiency in the EAEU countries.

**Key words:** value added tax, harmonization of taxation systems, uneven distribution of tax burden.

JEL: F69, H71